

ԹԵՄԱ 1.

ՔՎՂԱՔՎԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ. ԳՎՂԱՓԱՐՆԵՐԸ ՓՈԽՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՐՀԸ

§ 7. ԱՄՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՅՈՒՄԸ

1

Գնալով աճում էր գաղութարևակների դժգոհությունը անգլիական պառլամենտի սահմանած հարկերի նկատմամբ: Երբ անգլիական առևտրականները մեծ քանակությամբ թեյ բերեցին Բոստոն, որի վրա պառլամենտը հատուկ հարկ էր դրել, Բոստոնի բնակիչները, հնդկացիների հագուստներ հագած, հարձակվեցին նավերի վրա և թեյով արկղերը նետեցին ծովը: Այդ իրադարձությունը պատմության մեջ մտավ «Բոստոնի թեյախամություն» անունով: Անգլիական իշխանությունները փակեցին ապրանքների մուտքը Բոստոնի նավահանգիստ:

2

1775 թ. անգլիական զինվորական ջոկատը շարժվեց Բոստոնից ոչ հեռու գտնվող ապստամբների զենքերի պահեստը: Զինվորները ոչնչացրին պահեստը: Սակայն երբ նրանք վերադառնում էին, տների, ծառերի ու պարիսպների հետևում թաքնված ապստամբները սկսեցին գնդակոծել նրանց: Թագավորական զորաջոկատը դիմեց փախուստի:

3

Անկախության հռչակագիրը ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Երբ իրադարձությունների ընթացքը որևէ ժողովրդի հարկադրում է խզել իր քաղաքական կապերը մեկ այլ ժողովրդի հետ և մյուս տերություններին հավասար անկախություն նվաճել... ապա մարդկության կարծիքի նկատմամբ պատշաճ հարգանքը պարտադրում է նրան շարադրել այն պատճառները, որոնք նրան մղել են անջատման...

Մենք ակնհայտ ենք համարում հետևյալ ձմարտությունները, որ բոլոր մարդիկ ստեղծվել են հավասար, և նրանց բոլորին Արարիչը օժտել է որոշ անկապտելի իրավունքներով, այն է՝ կյանքը, ազատությունը և երջանկության ձգտումը: Այդ իրավունքների ապահովման համար մարդիկ հիմնել են կառավարություն, որը կառավարվողների համաձայնությամբ օժտված է արդար

իշխանությամբ: Իսկ եթե կառավարման տվյալ ձևը դառնում է նրանց նպատակների համար կործանարար, ապա ժողովուրդն իրավունք ունի փոխելու կամ վերացնելու այն և սահմանելու նոր կառավարություն:

...Այդ գաղութները... երկար ու համբերությամբ տարել են զանազան կեղեքումներ, և այժմ միայն անհրաժեշտությունն է նրանց ստիպում փոխել կառավարման ներկա ձևը: Մեծ Բրիտանիայի ներկա թագավորի պատմությունը լի է չդադարող անարդարություններով... որոնց անմիջական նպատակն է այս նահանգներում ստեղծել բռնակալություն:

Որպես ապացույց՝ անաչառ աշխարհի դատին ենք ներկայացնում հետևյալ փաստերը.

Նա՝ Անգլիայի թագավորը, հրաժարվեց հաստատել այն օրենքները, որոնք չափազանց օգտակար և անհրաժեշտ էին ընդհանուրի բարօրության համար...

Նա ձգտում էր խոչընդոտել այս նահանգների բնակեցմանը:

Նա... այստեղ ուղարկեց իր բազմաթիվ աստիճանավորներին, որոնք սնանկացնում էին ժողովրդին և ծծում նրա արյունը:

Նա... հաստատեց հետևյալ գործողությունները...

Մեր առևտրի դադարեցումը աշխարհի բոլոր մասերում:

Առանց մեր համաձայնության մեզ վրա հարկեր դնելը...

Նա հրաժարվեց մեզ կառավարելուց, գրկեց իր հովանավորությունից և պատերազմ հայտարարեց մեզ:

Նա մեզ թալանում էր ծովում, ամայացնում մեր ծովափերը, հրդեհում մեր քաղաքները և կոտորում մեր քաղաքացիներին...

Այդ պատճառով մենք՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների ներկայացուցիչներս, հավաքված ընդհանուր կոնգրեսում... Սույն գաղութների ժողովրդի անունից ու լիազորությամբ հայտարարում ենք, որ այդ միացյալ գաղութներն էությամբ և իրավամբ պետք է լինեն ազատ ու անկախ նահանգներ, որ նրանք ազատվում են բրիտանական թագի ամեն տեսակի հպատակությունից, և դրանց ու Մեծ Բրիտանական պետության միջև ամեն մի քաղաքական կապ լիովին խզվում է...

